

ՀԱՅՈՑ ՏԻԵԶԵՐԱՔԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՔՆՈՑԱՅԻՆ ԾԵՍՈՒՄ

Ա. Զ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Այս աշխատանքը¹ նվիրված է դարբնության հետ կապված մի հետաքրքիր ծիսական սովորույթի, որը դարասկզբին մեծ տարածում է ունեցել Հայաստանի տարբեր շրջաններում: Այն մեզ է հասել հայ ազգագրության երախտավոր Երվանդ Հայայանի² գրառումների շնորհիվ. Սովորույթին ուշադրություն են դարձրել նաև Ստ. Լիսիցյանը³ և Գ. Չուրխանը⁴: Հետաքրքիր է, որ դրա մասին հիշողությունները պահպանվել են մինչև մեր օրերը, և վերջին տարիներին Վայոց ձոր կազմակերպված գիտառշավների ժամանակ գրանցվեցին մի շարք նոր տարբերակներ:

Ծիսական սովորույթը կապված էր Զատիկի տոնակատարության հետ, երբ Ավագ Ուրբաթ օրը գյուղի կանայք դարբնին պատվիրում էին «ուրբաթարուր»⁵ կոչվող պողպատե մատանիներ, ապարանջաններ կամ «դոդ» վզնոցներ՝ հարսների կամ «չարը կոխած» կանանց համար⁶: Ժողովրդական բացատրությամբ երկաթե ապարանջանը կամ մատանին սխալմամբ էր կրողին չար աչքից կամ չար ուժերից⁷: Վարանդաում դա մեկնաբանվում էր որպես սատանաների վնասակարությունը կանխող միջոց: Գանձակում «ուրբաթարար» կոչվող ապարանջանը կամ մատանին դարբինը պատրաստում էր ուրբաթ առավոտյան, Իրոնք գերծ էին պահում չարիքից և կայծակահարության վտանգից⁸:

¹ Սույն հոդվածը նվիրվում է ազգագրագետ Զավեն Խառատյանի հիշատակին, ում կազմակերպած բանավեճային քննարկումների ժամանակ նրա և Լևոն Աբրահամյանի հարցադրո մների միջոցով հղկվեցին և հասունացան աշխատանքում առաջ բաշված մի շարք կրույթներ, որի համար հեղինակը արտահայտում է իր խորին շնորհակալությունը:

² Տե՛ս Ե. Լալայան, Երկեր, հ. 1, Երևան, 1988, էջ 286, նույնի, Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 200, 449, նույնի, Վայոց ձոր, Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գր. 19, Թիֆլիս, 1910, № 1, էջ 144, նույնի, Վայոց ձոր, ԱՀ, գր. 15, Թիֆլիս, 1906, էջ 144, նույնի, Զանգեզուր, ԱՀ, գր. Դ. Թիֆլիս, 1898, № 2, էջ 110:

³ Տե՛ս Ստ. Լիսիցյան, Զանգեզուրի հայեր, Երևան, 1969, էջ 166, Ст. Лисицяна. Армяне Нагорного Карабаха. Ереван, 1992, էջ 164:

⁴ Տե՛ս Գ. Փ. Կուրսի. Культ железа у кавказских народов.—Известия Кавказского историко-археологического института, т. V, Тифлис, 1927, էջ 83, նույնի. Амулеты и талисманы кавказских народов. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. 46, Тифлис, 1913, էջ 219:

⁵ Հայաստանի տարբեր շրջաններում այն ունի նաև «ուրբաթարար», «ուրբաթարուր», «ուրբաթրուր» և այլ անվանումներ:

⁶ Տե՛ս Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 449, Ստ. Լիսիցյան, նշվ. աշխատությունը, էջ 166, Ст. Лисицяна, նշվ. աշխ., էջ 164, Կ. Սեդրոսյան, Արհեստավորական ավանդույթների արտահայտությունները լեհնականցիների կենցաղում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, գր. 6, Երևան, 1974, էջ 234, Ա. Թադևոսյան, Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ), տ. 1, էջ 59, տ. 2, էջ 24, 49, տ. 3, էջ 54: Ստ. Լիսիցյանը նշում է, որ «ուրբաթարուր» պողպատյա մատանին, որպես չարխախան հրահան, Արցախում կառում էին նաև երեխայի ուսից:

⁷ Տե՛ս Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 200:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 449: Մատանիները մի շարք այլ վայրերում ունեցել են այլ անվանումներ՝ օր. «անժմի», տե՛ս Ստ. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 166, Կ. Սեդրոսյան, նշվ. աշխ., էջ 234: Կամ «ուրբթի դոդ, ուրբաթավորի քլազուկ» տե՛ս Ա. Իսրաելյան, Հայոց եր-

Մատանու չարխափանության, ծնունդի հաջողության և հիվանդություններ կանխելու հետ կապված նման սովորույթ տարածված է եղել նաև այլ ժողովուրդների՝ վրացիների, սբխազների, կյուրիպների, Միջին Ասիայի տաջիկների, Մալկուպի ոռուների և Հարավ-արևելյան Ասիայի մի շարք ժողովուրդների ավանդույթներում⁹:

Մեր կողմից գրանցվել է ծխական սովորույթի միմյանց լրացնող երկու տարբերակ: Դրանցից մեկը կատարվում էր հենց Ջատկի տոնակատարության Ավագ Ուրբաթ օրը: Այդ օրը գյուղի տարեց կանայք, դիմելով դարբնին, խնդրում էին պատրաստել «ուրբաթարուրներ»: Դարբինը դրանք պատրաստում էր հատուկ երկաթից, որը պետք է նախապես հավաքած լիներ գյուղի յոթը թաղերից¹⁰: Մինչև ապարանջանի կամ մատանու պատրաստումը դարբինը մուրճի յոթ ծխական հարված էր հասցնում գնդանին¹¹ (որոշ վկայությունների համաձայն՝ այն երկաթի կտորին, որից պետք է պատրաստվեր մատանին): Այնուհետև, առանց որևէ մեկի հետ խոսք փոխանակելու, նա սկսում էր մատանու կամ ապարանջանի պատրաստումը: Ծատ դարբիններ պարտադիր են համարել նաև անձկությունը, որպեսզի որևէ մեկը չտեսնի, թե ինչպես է պատրաստվում չարխափան ուժով օժտված մատանին կամ ապարանջանը: Ենթադրվում էր, որ կողմնակի մարդու ներկայությունը կամ որևէ մեկի հետ դարբնի խոսք փոխանակելը կկորցնեի առարկայի չարխափան ազդեցությունը¹²: Նշված ծխական առարկաների դիմաց դարբինը վճար չէր ընդունում և նման առաջարկը համարում էր նույնիսկ վիրավորական: Սակայն կանայք, ընդունելով դրանք որպես տոնական նվերներ, փոխարենը նվեր էին տանում դարբնից հավի ձու¹³: Տոնակատարության ժամանակ դարբնի նվիրած մատանին, ապարանջանը կամ «դոդ» վզնոցը կանայք պահպանում էին և, որպես երեխայի ծննդյան հաջողությունը ապահովող չարխափան միջոց, օգտագործում հղիության և ծնունդի ժամանակ¹⁴:

Ծեսի մյուս տարբերակում դարբինը Ավագ Ուրբաթ կեսգիշերին սկսում էր երկաթի ձիական կտուճը՝ երկաթի ամեն մի կտորին մուրճի երեք կամ յոթ խորհրդանշային հարված հասցնելով: Գործողությունը շարունակվում էր մինչև արևածագ, որից հետո ծեծված երկաթը պահվում էր: Տուն գնալով՝ դարբինը հայտնում էր մորը, որ երկաթը ծեծել-պատրաստել է¹⁵: Նույն Ավագ Ուրբաթ օրը, լուսաբացից հետո նա ծեծված երկաթից ապարանջան, մատանի կամ «դոդ» վզնոց էր պատրաստում կանանց ու հարսների համար: Այդ նույնը ծննդաբերության հաջողությունն ապահովելու նպատակով սկեսորների պատվերով պատրաստվում էր հղի կանանց համար: Այստեղ ևս լուրջությունն ու անձկությունը գործողության անհրաժեշտ պայման էին, որոնց պահպանումը պարտադիր էր նաև երկաթը կռելիս¹⁶: Ավելին, բացի իր մորից, ոչ ոք չպետք է նույնիսկ նկատեր կամ իմանար, որ դարբինը դարբնոց է գնում՝ երկաթը ծխականորեն կռելու նպատակով: Բանասացների վկայության համաձայն, Ջատկի Ավագ Ուրբաթ ծեծված երկաթից դարբինը չարխափան

կաթե և պողպատե հմայական պահպանակները (Հանրապետական գիտ. նստաշրջան՝ նշվելով 1982—1983 թթ. դաշտային հետազոտությունների հանրագումարին (գեկուցումների թեզիսներ), Երևան, 1984, էջ 15:

⁹ *St'u* Мифы народов мира. М., 1988, т. 2. էջ 147 այսուհետև՝ МНМ), О. А. Сухарева, Пережитки демонологии и шаманства у равнинных таджиков. В кн.: Домусульманские верования и обряды Средней Азии, М., 1975, էջ 32, Г. Ф. Чурсина. Культ железа у кавказских народов, էջ 83, С. И. Рахвиашвили. Рачинские кузнечы.— «Совет. этнография», М., 1975, № 2, էջ 96:

¹⁰ *St'u* Յ. В. Харатян, Культурные мотивы семейных обычаев и обрядов у армян. Հայ ազգագրություն և բանահյուսություն, գր. 17, Երևան, 1988, էջ 22: ԴԱՆ, տ. 1, էջ 28: Այս սովորություն էականը «յոթ» թվի սրբազանության և ամբողջականության իմաստի մեջ է: Այն նշում է տիեզերական սրբազան տարածքը: Նմանատիպ ենթատեքստ նկատելի է նաև Համբարձման տոնին յոթ աղբյուրից ջուր հավաքելու, մատաղի միսը յոթ տան մեջ բաժանելու կամ դրանը յոթ տնից, թաղից հավաքելու և մի շարք այլ սովորույթներում:

¹¹ *St'u* Ե. Լալայան, Վայոց ձոր, ԱՀ, գր. 19, էջ 144, ԴԱՆ, տ. 2, էջ 2:

¹² *St'u* ԴԱՆ, տ. 1, էջ 78, տ. 2, էջ 48:

¹³ *St'u* ԴԱՆ, տ. 2, էջ 25:

¹⁴ *St'u* Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 449, Յ. В. Харатян, նշվ. աշխ., էջ 22, ԴԱՆ, տ. 2, էջ 2:

¹⁵ *St'u* ԴԱՆ, տ. 2, էջ 5:

¹⁶ *St'u* նույն տեղը:

իբեր՝ մատանի, ապարանջան, «դող», կարող էր պատաստել տարվա ցանկացած այլ օր¹⁷: Լակայն, որպեսզի պատրաստվող առարկան ունենար քարերար, չարխափան ուժ ու կաբոլություն, դարբինն այն պետք է պատրաստեր քառասուն հարվածով: Դրանից ավել կամ պակաս հարվածների թիվը գցում էր հմայիլի զորությունը¹⁸: Այս տարբերակում նույնպես պատրաստված ծիսական առարկաների դիմաց որպես նվեր ընդունվում էր միայն ձու¹⁹:

Փորձենք այս երկու տարբերակները իմաստաբանական վերլուծության ենթարկել նախ առանձին-առանձին և հետո՝ համադրության միջոցով:

Առաջին տարբերակում Ջատկի Ավագ Ուրբաթ պատրաստվող «ուրբաթարուր» մատանիները ժողովրդական մեկնաբանությամբ կանայք կրում էին սատանաներից կամ կայծակից անվնաս մնալու համար:

Հարց է ծագում. ինչո՞ւ սատանայից կամ կայծակից վտանգ էին սպասում միաժամանակ: Պետք է նկատի ունենալ, որ Ջատկի տոնակատարությունը քրիստոնեական տոնաճիսական համակարգը ժառանգել է միջնադարի ստանդարտի հավատալիքային համակարգերից: Ջատկին իր տոնաճիսական իմաստավորմամբ կապվում է բնության վերածննդի, հնի ու նորի, չարի ու բարու, կարգախափան և կարգապահական ուժերի պայքարի և տիեզերքի նորոգման գաղափարի հետ: Նկատի ունենալով նշվածը և իմանալով, որ Ջատկի Ավագ Ուրբաթը Քրիստոսի հալածանքների օրերից մեկն է, այդ օրվա բնորոշ հատկանիշներից մեկն էլ արտահայտվում է չարի ու բարու բախման գաղափարում: Փորձենք գտնել, թե ինչ էր «կայծակը», և ինչպիսի հարաբերություն ունեին միմյանց նկատմամբ կայծակն ու սատանան, և ինչ տեղ ունեն այդ հարաբերության մեջ մատանին: Ժողովուրդն ասում է, որ կայծակը հրեշտակների գավազանն է, որով խփում են սատանաներին²⁰: Ավելի կոնկրետ՝ կայծակը Գաբրիել հրեշտակապետի հրեղեն նետն է, ծիածանը՝ աղեղը, իսկ փայլակը՝ սուրը, որոնցով նա մաքառում է «բյուր բյուրոց ժողոված սատանաների դեմ, որոնք կուզեն հակառ կայեն արևուն»²¹: Ժողովրդի մեջ իշխող կարծիքով Գաբրիել հրեշտակապետը դարբնության հովանավորն է: Ընդունված է նաև նրան համարել քրիստոնեության շրջանում Վահագն վիշապաքաղի դերի ժառանգորդ²²:

Այժմ ելնելով ժողովրդական մեկնաբանությունից՝ փորձենք պարզել այս ծիսական տվությունից թեման: Ուրբաթ օրը ապարանջան են կրում թե սատանաներից և թե կայծակից պաշտպանվելու համար: Փաստորեն վտանգը և վերևից (կայծակ), և ներքևից (սատանա) է: Դրանք միմյանց հակամարտ թշնամի ուժեր են, որոնք պայքարի մեջ են մտնում արևի համար: Չար կողմը (սատանա) վտանգում է արևի գոյությունը, իսկ բարի կողմը (Գաբրիել հրեշտակապետ) պահպանում է այն՝ կայծակների միջոցով սատանաներին հարվածելով: Նման գործառույթ բնորոշ է նաև Վիշապաքաղ Վահագնին: Նմանատիպ սյուժեի առկայությունը նկատելի է նաև ժայռապատկերներում՝ արևը կու սվող վիշապի դեմ ստեղծածամարդու պայքարը պատկերող դրվագներում²³: Այսպիսով պետք է կարծել, որ մարդկանց համար Ավագ Ուրբաթ օրը վերևից և ներքևից սպասվող վտանգը այդ միջավայրերը ներկայացնող ուժերի միջև ծագած հակամարտության մեջ է: Իմանալով, որ հակամարտության հիմնական պատճառն արևն է, կարելի է ենթադրել, որ արևը խորհրդանշող ծիսական որևէ առարկա կրելը մարդկանց կարող էր պաշտպանել սատանաներից սպասվող վտանգից, քանի որ արևի միջնորդությամբ ձեռք էր բերվում վերին ուժի (Գաբրիել հրեշտակապետի, Վահագն Վիշապաքաղի) հովանավորությունը՝ ընդդեմ չար ուժերի (սատանաներ, վիշապ): Կարծում ենք, որ դարբնի պատրաստած մատանին կամ ապարանջանը խորհրդանշում են արևը²⁴: Ահա թե ինչու այն մարդկանց համար կարող էր սնվտանգ դարձնել կայծակը, քանի որ վերջինս ուղղվում էր սատանաների դեմ, չեզոքացնելով նաև նրանց կողմից մարդկանց սպասվող վտանգը: Իհարկե, կարող է բնական հարց ծագել, թե ինչո՞ւ են մարդիկ հայտնվում այդ ուժերի բախման դաշտում, չէ՞ որ

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 49:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 25:

²⁰ Տե՛ս Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 176:

²¹ Տե՛ս Փ. Սրվանձտյան, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 77:

²² Տե՛ս Վ. Բոդյան, Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 225:

²³ Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Գիտությունը սկսվում է նախնադարից, Երևան, 1978, էջ 28,

93:

²⁴ Բանահյուսության մեջ արևի հետ կապված խորհրդանիշները ուսումնասիրել է Ս. Հարությունյանը: Տե՛ս С. Арутюнян, Мифологический образ солнца в загадке о лам-гаде.— Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1976, № 1, էջ 240:

սվելի գերադասելի է չեզոք ու հանգիստ գոյավիճակը: Բանն է, որ այս պայքարը տիեզերապահպան իմաստ ունի, և մարդիկ գտնվելով Տիեզերքի եռամասն կառուցվածքի միջնամասում, այսպես թե այնպես չեն կարող անմասն մնալ այդ պայքարից. Պայքարն ուղղված է արարչագործության արդյունքը պահպանելուն, իսկ մարդկանց գոյությունը Տիեզերքում նույնպես դիտվում է արարչագործության արդյունք, և այն պահպանելը տիեզերապահպան ուժերի գործն է: Իսկ թե ինչու էին հարսները կամ հոյ կանայք կրում ապարանջան, պետք է բացատրել նրանով, որ տոնը կրելով Տիեզերքի զարթոնքի, ծնունդի գաղափարը, իմաստաբանորեն իր համակարգի մեջ ներառում է այն, ինչ կատարվում է ծնունդի և զարթոնքի հետ:

Վերը շարադրվածը կարող է նախնական հիմք ծառայել դարբնի ծիսական կերպարին լր:սատուներ պատրաստող արարչագործի դեր վերագրելու: Մեր քննարկումից պարզ դարձավ նաև, որ արարչագործության գաղափար անմասն չէ չարի ու բարու պայքարի, քստը կոսմոսով փոխարինելու գաղափարից²⁵:

Մինչև այժմ կատարված վերլուծությունը բուն ծիսական գործողության հետ անուղղակի է կապված, և առայժմ պայքար նշող որևէ ծիսական գործողության մասին չի խոսվել: Արտահայտվո՞ւմ է արդյոք տիեզերական հակամարտության թեման քննարկվող ծիսական արարողությունում: Ինչպե՞ս է արտահայտվում և ի՞նչ դիրք ունի արարչագործությունը նախորդող պայքարում: Ինչպե՞ս է արտահայտվում վերը նշված թեմատիկ միահյուսվածությունը ծիսական գործողությունում:

Մինչև մատանու կամ ապարանջանի պատրաստման բուն գործողությանն անցնելը, դարբնի մուրճով յոթ հարված էր հասցնում զնդանին: Այսպիսի ծիսական գործողություն ընդունված է նաև կովկասյան մի շարք ժողովուրդների մոտ: Օրինակ, արխազական ծիսական երգման արարողություններից մեկն ուղեկցվում էր մուրճով զնդանին ծիսական հարված հասցնելու գործողությամբ²⁶, որին տրվում է ամպրոպի և որոտի իմաստավորում²⁷: Հայոց մեջ էլ մուրճի հարվածներին տրվում է ձայնային իմաստավորում, որը մյուս իմաստավորումներով հանդերձ ունի նաև սկիզբ կամ վերջ ազդարարող իմաստ: Այդ ստույծով այն չափազանց մոտ է գոնգի կամ թմբուկի ծիսական կիրառմանը, որի հարվածները ունեն սրբազան ժամանակի սկիզբը ազդարարող իմաստ: Այսինքն՝ դրանք ծեսի սասնակիցներին առօրեականից տեղափոխում են ծիսական կյանքի ոլորտ: Եթե նկատի ունենանք նաև թմբուկի հարվածափայտիկների կայծակնախշերի²⁸ և դարբնի մուրճի կայծակնային հատկանիշների միջև առկա զուգահեռը, ապա զնդանին յոթ հարված խփելը կարելի է դիտել որպես ժամանակների փոփոխության ազդարարում, անցում սովորական ժամանակից սրբազան ժամանակին, որը ենթադրում է նաև սովորական տարածքից տեղափոխում սրբազան կենտրոն՝ արարչագործության վայր, որտեղ Տիեզերական ծառի մոտ տեղի են ունենում նաև չարի ու բարու բախումը և բարու հաղթանակը. Ջնդանը իր խորհրդանշային ենթատեքստում ունի Տիեզերական ծառի իմաստ, որի եռամասն կառուցվածքի համակարգում դարբնի ստանում է վերին՝ երկնային միջավայրի պատկանելություն: Այն, որ դարբնի ծիսական հարվածը զնդանին ընկալվում է որպես վերին չարիսպան ուժի կողմից չարի սանձահարում, ակնառու է «Արտավազդի շղթաների ամրացման» ձեռում, որտեղ դարբնի ծիսական հարվածները զնդանին բացատրվում է որպես Արտավազդի շղթաների ամրացմանը և տիեզերքի կայունության պահպանմանն ուղղված գոր-

²⁵ Չարթոնքը, վերածնունդը առասպելական մտածողության համակարգում իքննորոյց սկստ չէ, այլ վերարտադրում է նախասկզբնական արարչագործությունը՝ այն կրկնելու միջոցով: Այս առումով այն նույնանում է արարչագործության հետ:

²⁶ *ՏԵ՝Ս* II. С. Джанашия. Статьи по этнографии Абхазии. Сухуми, 1960, էջ 73:

²⁷ *ՏԵ՝Ս* Д. И. Гулия, Сборник абхазских пословиц загадок, скороговорок, омонимов и омографов, народных примет о погоде, заговоров и наговоров. Сухуми, 1939, էջ 141, И. А. Аджинджал. Из этнографии Абхазии. Материалы и исследования. Сухуми, 1969, էջ 251—252, 266, В. Г. Ардзинба. Древний восток: этнокультурные связи, М., 1988, էջ 277:

²⁸ *ՏԵ՝Ս* Л. А. Абрамян, Р. В. Пикичян. Греческая свирела, австрийская гуделка и армянская зурна: генезис музыкального инструмента в ритуально-мифологическом контексте, ՊԲՀ, 1992, № 2, էջ 180:

ծողությունը²⁹: Այսպիսով, դարձի մուրճի յոթ ծիսական հարվածները ազդարարելով ժամանակի և տարածության սրբազանացումը, խորհրդանշում են արարչագործությանը նախորդող քառու, քարու և չարի միջև տեղի ունեցող պայքարը, առաջինի հաղթանակը, որին մյուս գործողության մեջ հաջորդում էր արարչագործությունը՝ արևի պատրաստումը կամ ազատագրումը:

Ծեսի երկրորդ տարբերակը նույնպես կատարվում էր Ավագ Ուրբաթ օրը, սակայն դրա նախապատրաստումը սկսվում էր հինգշաբթի յույս ուրբաթ գիշերը:

Մենք գիտենք արդեն, թե ինչպես էր իմաստավորվում Ավագ Ուրբաթը: Ուշադրություն դարձնենք այն ժամանակահատվածի վրա, թե երբ էր դարբինը ծեծում երկաթը: Ծիսական կոանահարումը սկսվում էր կեսգիշերին և շարունակվում մինչև արևածագ: Դա քառասյին ուժերի ակտիվացման գիշերն է, երբ նրանք ցանկանում են գերել արևը և խոչընդոտել արևածագը, որը համազոր է Տիեզերքի կործանմանը³⁰: Դարբինը հենց այդ ժամին զրգահանի մոտ (Տիեզերական ծառ) իր կայծակնաբեր մուրճով կոխվ է մյուս Տիեզերքի կարգախափան ուժերի դեմ, որի հաջողության վկայությունը այդ գիշերին հաջորդող արևաճուգն է՝ վերածնված արևի գալուստը:

Հայոց մեջ ընդունված է եղել այն պատկերացումը, որ ամպրոպի ժամանակ երկնքից պողպատ է թափվում³¹, իսկ կայծակը հաճախ ընկավել է որպես շիկացած պողպատի փայլատակում, որը մեզ հիշեցնում է Օլիմպիական Ջևսի պողպատե կայծակների մասին առասպելը, կայծակներ, որոնք նրա համար կոում էր աստվածային դարբին Հեփեստոսը³²: Այս առումով հետաքրքիր է նաև «թրպղդուրների» մասին ժողովրդական պատկերացումը, ըստ որի այն թափվում է երկնքից ամպրոպի ժամանակ: Որպես չարխափան թախման այն օգտագործվում է ծնունդի ժամանակ թռչող կոչվող հրեշից ծննդկանին անվտանգ դարձնելու համար³³: Այս հավատալիքների հետ է կապվում նաև քարի ոգիների մասին «Ուրբաթունտ» կոչվող ավանդույթը, որի համաձայն Ավագ Ուրբաթ գիշերը նրանք մարդկանց պահպանում են չար ոգիներից՝ ապահովելով նաև արևածագի և ծնունդի հաջողությունը³⁴: Այսպիսով, ծեսի խորհրդանշալից համակարգի իմաստաբանումը և հավատալիքային նշված զուգահեռները թույլ են տալիս եզրակացնել, որ Ավագ Ուրբաթ կեսգիշերին դարբին կատարած ծիսական կոանահարությունը խորհրդանշորեն պատկերում է Ամպրոպամարտիկի պայքարը վիշապի դեմ, որը փորձում է գերել արևը կամ խանգարել արևագալը: Մինևույն ժամանակ երեք և յոթ թվերը աստվածային ամբողջականության թվային խորհրդանիշներ են, արարչագործական թվեր³⁵: Դա ևս հաստատում է այս ծիսական գործողության իմաստաբանումը, որպես կարգապահական և կարգախափան ուժերի միջև տեղի ունեցող պայքարը (1) և արարչագործական ակտը (արեգակի արարում կամ վերածնունդ) (2) արտահայտող ծես:

Նկարագրված ծեսի հետ սերտ առնչություն ունի նաև տարվա այլ օրերին հարսների և հղի կանանց համար չարխափան մատանու, ապարանջանի կամ «ոտղ» վզնոցի պատրաստումը մուրճի քառասուն հարվածի միջոցով:

Ծիսական քառասուն հարվածների թիվն արդեն նշում է, որ դրանք անհրաժեշտ են արարչագործության համար: Հայոց ծիսակարգում քառասունը կիրառվում է որպես չար ուժերի հնարավոր ազդեցության շրջան, սահմանային հատված իրար հաջորդող որակապես տարբեր ժամանակային փուլերի միջև: Այս առումով շատ հատկանշական է երեխայի ծնունդի հետ կապված քառասունքի սովորույթը, երբ հետծննդյան առաջին քառասուն օրը նամարվում էր երեխայի և ծննդկանի վրա չար ուժերի հնարավոր ազդեցության շրջան³⁶:

²⁹ Այս ծեսին անդրադարձել է նաև Ս. Հարությունյանը, տեսնելով դրա մեջ վիշապամարտի հնագույն առասպելական սյուժեի արտահայտությունը, որտեղ դարբինը ստանում է Ամպրոպամարտիկի դեր: Տե՛ս Ս. Հարությունյան, Վիշապամարտը «Սասնա ծռերում» 1981, Լրաբեր, № 1, էջ 70:

³⁰ Ծեսում այդ գիշերը կոչվում է նաև Խավարման գիշեր: Տե՛ս ԴԱՆ, տ. 2, էջ 5, տ. 3, էջ 49:

³¹ Տե՛ս Զ. Դյուբայլ, Տիպի և ռարտի, Մ., 1990, էջ 17:

³² Տե՛ս Ա. Ա. Թախ-Գոյի. Գրեթեկային միջոցառումներ, Մ., 1989, էջ 70, 80. Բ. Գրեյսե. Միջոցառումներ Գրեյսեի, Մ., 1992, էջ 61—63:

³³ Տե՛ս Յ. Վ. Խարատյան, նշվ. աշխ., էջ 22. Հեղինակը նշում է նաև, որ թռչող հիվանդությանը տառապող ծննդկան հարսները կրում էին դարբինի պատրաստած երկաթե մատանին: Նման նյութ գրանցվել է նաև մեր կողմից: Տե՛ս ԴԱՆ, տ. 3, էջ 48:

³⁴ Յ. Վ. Խարատյան, նշվ. աշխ., էջ 28:

³⁵ Տե՛ս Պ. Պողոսյան, 1600-ամյա գաղտնիքներ, Երևան, 1991, էջ 94—96:

³⁶ Տե՛ս Յ. Վ. Խարատյան, նշվ. աշխ., էջ 28:

Կառասուն հարվածի ավանդությանը նշում է, որ այն մի փուլ է, որի ընթացքում սկսվում, հասումանում և ավարտվում է արարումը: Դարբնի հարվածներին տրվող թվա- յին կարևորությունը մեզ հուշում է, որ դրանցից յուրաքանչյուրը նպատակային է և ան- րկապման անհրաժեշտ ծիսական առարկաների խորհրդանշային իմաստավորման համար: Ամեն մի հարված որոշակի փոփոխություն է մտցնում շարի ու բարո պայքարի, քսոսի և կոսմոսի հարաբերակցության մեջ: Իսկ դրանց ամբողջությունը քառասուն թվի միջոցով ազդարարում է այդ փոփոխության ավարտը հոգուո բարո, կոսմոսի, հաստատման և արարչագործության: Հիշենք, որ ինչպես հեքիաթներում հրեշի սպանվելուց հետո հերոսի մեկ լրացուցիչ զարկը կարող է վերակենդանացնել նրան, այնպես էլ դարբնի կողմից քա- սասունից ավել տրվող հարվածը կարող է նոր փուլի սկիզբ դառնալ, իսկ պակասը՝ անա- վարտ փուլ: Ծիսական գործողության մասն իմաստարանությունը թույլ է տալիս ծիսական շտասուն հարվածները մեկնել որպես վիշապամարտ, իսկ մատանին կամ ապարանջանը՝ այդ պայքարի շնորհիվ ազատված կամ արարված արևի խորհրդանշաններ: Նման մեկնու- թյունը «քառասուն հարվածով» այս ծեսը կապում է Ջատկի Ավագ Ուրբաթ գիշերը «երկաթ ձեծելու» ծեսի հետ: Եթե հաշվի առնենք նաև, որ նշված շարխափան առարկաները պատ- ռաստվում էին Ավագ Ուրբաթ ծիսականորեն ծեծված երկաթից, ապա այդ երկու գործո- ղությունների միջև նշված կապը ավելի հաստատուն է դառնում: Ավագ Ուրբաթը առաջին ծեսի օրն է, երբ Ամպրոպամարտիկ, արարիչ աստվածային դարբնի պայքարի միջոցով վերածնվում է արեգակը: Տարվա մյուս օրերին Ավագ Ուրբաթ ծեծված երկաթից քառասուն հարվածով ապարանջանի կամ մատանու պատրաստումը իմաստարանորեն կրկնում է Ջատկի Ավագ Ուրբաթ դարբնի կոանահարմամբ կատարված ծիսական գործողությունը: Այսինքն, «քառասուն հարվածի» ծեսը իմաստարանորեն նույնանալով «կոսմանահարման» ծեսի հետ՝ կրկնում է Առաջին ծեսը կամ նախասկզբնական արարչագործությունը:

Պայմանականորեն առաջին տարբերակը նշենք 1-ին, երկրորդ տարբերակի «երկաթ ձեծելու» ծեսը՝ 2-րդ, իսկ «քառասուն հարվածի» ծեսը՝ 2-րդ աս:

Երեք ծեսերում էլ ամպրոպի աստծո և արարիչի ծիսական գործառույթը կատարում է դարբինը: 1-ին և 2-րդ ծեսերում վիշապամարտը խորհրդանշվում է կոանի երեք կամ յոթ հարվածով: 2-րդ աս ծեսում՝ քառասուն հարվածի կոանահարմամբ: Արարչագործության ծխատասպելական ակտը խորհրդանշվում է 1-ին և 2-րդ աս ծեսում մատանու, 2-րդում՝ արևի միջոցով: Մատանու և արևի միջև խորհրդանշանային համագործությունը հիմնավորում է, որ 1-ին և 2-րդ աս ծեսերում մատանին փոխարինում է արևին՝ խորհրդանշելով արար- չագործական ակտը: Սակայն այն նշում է ոչ միայն արևը, այլ լույսի և խավարի հաջոր- դականության սկզբնավորումը, ժամանակի շարժման սկիզբը, որը ապահովվում է առա- րկական հերոս Արևի կողմից: Այսինքն՝ 1-ին և 2-րդ աս ծեսերում մատանին լինելով բնա- կան լուսատուի՝ արևի նշան, խորհրդանշում է Արև առասպելական հերոսին, նրա ծնունդը (կամ վերածնունդը), իսկ դարբինը նրա զուգընկերն է, որը որպես Ամպրոպային մարտիկ պաշտպանում է նրան վիշապից:

Այսպիսով, հայոց մեջ պահպանված դարբնոցային այս ծեսում ի հայտ է գալիս ամպ- րոպամարտի առասպելական թեմայի ճյուղերից մեկը, որը մեզ հաջողվեց վեր հանել ծի- սական խորհրդանշանների և խորհրդանշային գործողությունների ենթատեքստից: Ծեսի բնա- գույնը կատարած մեր աշխատանքը ավելի համոզիչ է դառնում քանահյուսական նյութի հետ այն համադրելու դեպքում: Հայ ժողովրդական քանահյուսական նյութում և հայկական լողովորդական էպոսում նշված առասպելական թեմայի դրսևորումներին հանգամանորեն անդրադարձել է Ս. Հարությունյանը³⁷:

Այս թեման մեծ տարածում ունի նաև Մերձավոր Արևելքի հնագույն բնակիչների և հնդեվրոպական ժողովուրդների առասպելներում ու քանահյուսությունում: Այդպիսին են Ինդրան և Բրիհասպատին (Բրահմանասպատի): Վերջինիս արարում է աստվածային վար- պետ Տվաշտարը: Նա ցրում է մուրը³⁸, պահպանելով տիեզերական օրենքը, և արարում արեգակը³⁹: Մի ուրիշ տեղում Ինդրան ինքն է ազատում արևին և նրան շարժում հաղոր- րում, ստեղծելով լույսի և խավարի հաջորդականությունը⁴⁰: Ինդրան դա կատարում է աստվածային խմիչք՝ սումս խմելուց հետո, իսկ սուման նա ստանում է Տվաշտարից⁴¹: Լատ-

³⁷ Տե՛ս Ս. Հարությունյան, նշվ. աշխ., Շ. Арутюнян, նշվ. աշխ.:

³⁸ Տե՛ս Ригведа: маңдалы I—IV, 1989, էջ 261:

³⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 264:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 303:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, էջ 380:

վիական առասպելական դարբին Տեյլավելը ինքն է կոփում արևը և այն տեղադրում երկնքում: Հաճախ ինքը՝ Պերկունասն է հանդես գալիս որպես Դիևասի դարբին՝ «Երբ ամպրոպը գոռում է, դա Պերկունաս դարբինն է կրակում սառունաններից»⁴². Լիտվական առասպելական դարբին՝ Կալվիսը, կոելով Պերկունասի գեները, մասնակցում է հրեշների չևս մղվող կռիվն, կոռում արևն ու երկնակամարը⁴³: Նարտերի էպոսի աղղական տարբերակում Տեպաշը իր դարբնոցում կոփում է Սոսրիկային (արևային հերոս)⁴⁴, ճուլնպիսին է մահ Կուրդալազոն աստվածային դարբինը օսեթների մոտ⁴⁵: Սկանդինավյան առասպելական դարբին Իլմարինենը կոռում է Թոռ ամպրոպային աստծո կայծակնաբեր մուրճը և Օդին աստծո պղնձե մատանին, որը խորհրդանշում է արևը⁴⁶:

Համաշխարհային առասպելաբանությունից բերված այս օրինակները թույլ են տալիս ենթադրել, որ ժողովուրդների առասպելների հետ զուգահեռներ անցկացնելով և թեմատիկ ընդհանրություններ գտնելով՝ ավելի ամրացնել ծեսի վերաբերյալ առաջ քաշված պնդումները:

Ծեսի խորհրդանշային համակարգում բացի վերը քննարկված հարցերից, անհրաժեշտ է լուսաբանել նաև հետևյալ հարցերը՝ ինչո՞ւ էր դարբնի պատրաստած մատանին կապված ծնունդի հետ, և ի՞նչ առնչություն կարող է ունենալ դրա հետ դարբինն ու արևի ազատագրման ծիսաառասպելական թեման:

Կարելի է ասել, որ կինը մատանու շնորհիվ մտնում էր դարբնի սրբազան գործուհուության ոլորտը: Մատանին իրենելով դարբնի արարչագործական գործառույթի կրողը, միջև երեխայի ծնունդը նրա համար ապահովում է նաև արարչագործությանը նախորդող դարբնի վիշապաբաղ, չարխափան դերը: Դրա միջոցով դարբինը ապահովում է ծնվելիք երեխայի ծնունդը, ազատելով նրան կնոջ ծննդաբերությունը արգելակող վիշապից, դառնալով կնոջ չար, վիշապային էության հակառակորդը՝ հօգուտ կանացի բարի, պտղաբերող, արարչագործ էության: Այդ նվիրատվությամբ դարբինն ինքը հղի կնոջ կամ հարսի հետ միասին խորհրդանշորեն կիսում է երեխայի արարման գործը՝ ծննդկան կնոջ հետ միասին դառնալով երեխայի ծնունդի համամասնակիցը. Դրա մի այլ խորհրդանշային ասպեկտը մատանու դիմաց դարբնին նվիրատրվող ձուն է, որը որպես ծննդկանի ծնունդը, հղիությունը խորհրդանշող սառը հանձնվում է դարբնի հովանավորությանը: Տեղի է ունենում տղամարդկային արարչագործության (մատանի) և կանացի արարչագործության (ձու) խորհրդանշների փոխանակություն, որը կարող է ընկալվել խորհրդանշային միավորում և դաշինք դարբնի ու ծննդկանի միջև: Նման փոխանակություն բնորոշ էր նաև ավանդական հարսանեկան ծեսերին: Տղայի կողմի աղջկան նվիրաբերում էր մատանի և ճուլնյակ մի քանի անգամ, իսկ աղջկա կողմի տղային՝ ձու (դրա լայն տարածում գտած, ընդունված ձևերից մեկը փեսային գրքանչի մատուցած ձվածեղն էր):

Ս. Հարությունյանը «Սասնա ծռեր» հայկական ժողովրդական էպոսին նվիրված իր ուսումնասիրությունում բացահայտել է վիշապամարտի զուգահեռ երեք տարբերակ, որոնցից մեզ համար հետաքրքիր են երկուսը՝ վիշապ-արև-Ամպրոպամարտիկ, վիշապ-աղջիկ-Ամպրոպամարտիկ, և էպոսի պատմներից մեկում՝ վիշապ-մատանի-Ամպրոպամարտիկ ևնթատարբերակը⁴⁷:

Ամպրոպամարտիկի դերում գտնվող էպոսի հերոսները՝ Սանասարը, Բաղդասարը, Մըհերը, վիշապից ազատելով աղջկան, ամուսնանում են նրա հետ⁴⁸: Հայկական ժողովրդական էպոսում, որպես գեղեցկուհու հետ ամուսնության պայման, առաջադրվում է արևի ազատագրումը վիշապից⁴⁹: Արևը հայկական քանահյուսությունում խորհրդանշվում է բազմազան միջոցներով՝ ոսկե կամ կարմիր խնձոր, թանկարժեք քար, ճրագ, մատանի⁵⁰: Սա-

⁴² Տե՛ս ՄԽՄ, հ. 2, էջ 499:

⁴³ Տե՛ս ՄԽՄ, հ. 1, էջ 618:

⁴⁴ Տե՛ս ՄԽՄ, հ. 2, էջ 516:

⁴⁵ Տե՛ս Ж. Дюмезвль, Գշվ. աշխ., էջ 78:

⁴⁶ Տե՛ս E. M. Мелетинский, «Эдда» я ранние формы эпоса. М. 1968, էջ 159, 181, նույնի, Происхождение героического эпоса, 1968, էջ 126, նույնանուն առասպելական դարբինը կարելի-ֆիննական «Կալեվալա» էպոսի գլխավոր հերոսները մեկն է, որը ձեռք է բերում կրակը, սպանելով այն կուլ տված ձկանը, և դրանից պատրաստում արևը և լուսինը, այնուհետև նա Վյայնամեյնենի հետ վախեցնում է Լոուխին, որը ծայրի մեջ էր փակել լուսատուները և այդ միջոցով ազատում դրանք: Տե՛ս Kalevala, Карело-финский народный эпос (собр. Э. Ленрот). Петрозаводск, 1985, էջ 389—359:

⁴⁷ Տե՛ս Ս. Հարությունյան, Գշվ. աշխ., էջ 65:

⁴⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 66:

⁴⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 67:

⁵⁰ Տե՛ս С. Арутюнян, Գշվ. աշխ., էջ 239:

հասարակ և Դեղձուն ծամի ամուսնության պայմաններից մեկն այն է, որ «Այ վիշապի քերնեն հանի... աղջիկ իրեն կտանի...»⁵¹: Այս թեման ընդհանուր է հնդեվրոպական հիմնական առասպելին և հնդեվրոպալեզու ժողովուրդների լեզվա-առասպելական մտածողությանը⁵²: Եթե ընդունենք, որ «մատանու պատրաստման» քննարկվող ծեսում նույնպես դարբին-Ամպրոպամարտիկն բնորոշ են վիշապ-արև-Ամպրոպամարտիկ և վիշապ-մատանի-Ամպրոպամարտիկ հարաբերությունները, ապա մատանու Գլիրատվությունը հարսներին ու հղի կանանց միջնորդավորված ձևով վեր է հանում նաև վիշապ-աղջիկ-Ամպրոպամարտիկ հարաբերությունը: Այսինքն, մատանու Գլիրատվության միջոցով ոչ միայն չար ու ժերից (վիշապից) չեզոքացվում է ծնունդի Գկատմամբ վտանգը, այլև վիշապից ազատվում են կանայք ու հարսները: Սովորաբար այդ մատանիները ծննդկան կանանցից բացի կրում էին նաև ջահել կանայք ու հարսները, քայց ոչ մի դեպքում չամուսնացած աղջիկները: Վիշապից աղջկա փրկությանը հաջորդող դրվագը՝ աղջկա ամուսնությունը Ամպրոպամարտիկի հետ խորհրդանշվում է դարբնի՝ հարսներին և կանանց արև-մատանի Գլիրտելու ծիսական գործողությամբ: Դա նշանակում է, որ նա սպանել է վիշապին, որը ոչ միայն արևը պետք է կուլ տար, որպեսզի կործաներ տիեզերքը, այլ նաև մարդ երկնողին՝ կնոջը, այսինքն՝ դարբնից ազատելով կնոջը, ապահովում է մարդկային վերարտադրությունը: Արև-մատանու Գլիրատվությունը խորհրդանշելով կնոջ ազատագրումը վիշապից, փնևնույն ժամանակ, ինչպես նշվեց, ազդում է նրա բեղմնավորման ու ծննդաբերության հաջողության վրա: Հարց է ծագում՝ ինչո՞ւ: Մենք կարծում ենք, որ ծեսում մատանուն սրվող նման դերը պետք է կապել այն պատրաստողի՝ դարբնի արբանույթության հետ: Ըստ դրա, ենթադրում ենք, որ այստեղ խորհրդանշորեն արտահայտված է դարբնի և նրա կողմից վիշապից փրկված կնոջ ամուսնության (բեղմնավորման և մարդկության արարման նպատակով) առասպելական թեման: Նշենք նաև, որ մատանուն պողաբերող իմաստավորում են տալիս նաև սկանդինավյան ժողովուրդները⁵³:

Ամփոփելով, կարելի է ասել, որ Զատիկի ծիսակարգում հաստատուն տեղ գրաված այս ծեսի ենթատեքստային թեման վիշապամարտն էր իր հիմնական դրվագներով. վիշապի՝ արևը (մատանին) կուլ տալու անհաջող փորձը, որն ավարտվում է Ամպրոպամարտիկի կողմից կայծակ-ամպրոպներով վիշապի սպանությամբ, որին էլ հաջորդում է արևի (մատանու) վերածնունդը: Սրան զուգահեռ միահյուսված ձևով ընթանում է վիշապի՝ աղջկան կուլ տալու (կամ փախցնելու) փորձը: Աղջկան փրկում է Ամպրոպամարտիկը՝ վիշապին սպանելով, որից հետո նրանք ամուսնանում են (առաջին բեղմնավորում, ծնունդ): Այս երկու զուգահեռ պլոտներով գլխավոր առասպելական հերոս Ամպրոպամարտիկի ֆունկցիան ծեսում կատարում է դարբինը, իսկ աղջկա դերը այն կանայք, ովքեր դարբնից նվեր են ստանում մատանի⁵⁴:

Այսպիսով, քննարկված ծեսում պարզվեցին դարբնի ծիսական կերպարին բնորոշ մի շարք առասպելական գծեր, որոնց օգնությամբ մենք փորձեցինք հասկանալ նաև արարչագործական բնույթի ծեսի ընթացքում դարբնի պատրաստած մատանու ծիսական գործածության հիմքում ընկած խորհրդանշային ենթատեքստը, պարզաբանել մատանին ծիսական կիրառության մեջ դնող կանանց գործառույթը ու գտնել շփման այն եզրերը, որոնք կապում են մատանին պատրաստողին և այն կրողին: Իհարկե, կարելի էր նաև ծեսը մեկնաբանել այլ տեսանկյուններից, որոնք, սակայն, դուրս են այս աշխատանքի շրջանակներից, քանի որ մեր նպատակն էր ծեսի հիմքում ընկած ծիսատասպելական մտածողության ենթատեքստի պարզաբանումը և դրանում դարբնի կերպարի իմաստաբանումը: Փաստորեն դարբնի ծիսական գործողության մեջ կարելի է Գկատել երկու հիմնական գործառույթ՝ ռազմական (վիշապամարտ) և արարչագործական (արևի արարում), որոնք դրսևորվելով չափազանց միահյուսված ձևով, գրեթե նույնանում են⁵⁵: Դարբինը դառնում է Տիեզերքի գերազույն արժեքի՝ արևի ստեղծողը և այն պաշտպանողը (հետաքրքիր է, որ

⁵¹ Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, խմբ. Մ. Արեղյան, Երևան, 1930, էջ 82:

⁵² S6՝ս В. В. Иванов, В. И. Топоров. Исследования в области славянских древностей. М., 1974, էջ 30—70:

⁵³ S6՝ս E. M. Мелетинский, «Эдда» и ранние формы эпоса, էջ 159:

⁵⁴ Մատանին կարելի է դիտել նաև որպես մոզական շրջան, որն այն կրողին առնելով իր մեջ՝ անվտանգ է դարձնում նրա գոյությունը: Այդ մասին տե՛ս Ա. Խարայեյան, նշվ. աշխ., էջ 15:

⁵⁵ Այստեղ Գկատելի են Փ. Դյունեզիլի կատարած հնդեվրոպական Պանթեոնի եռաֆունկցիոնալ բաժանմանը բնորոշ դրսևորումներ, տե՛ս Ж. Дюжезиль. Верховные боги мидоевропейцев. М., 1986:

ուաշտականական գործը նա իրականացնում է կայծակների միջոցով, որոնց ստեղծողը նույն-
պես ինքը՝ դարբինն է): Դրանով հանդերձ նրա տղամարդկային նախասկզբի արարչա-
գործական գործառույթը ձևափոխվելով հաղորդվում է մատանին կրող կանանց, իսկ ըստ
նազմական գործառույթյան կանայք ձեռք են բերում նրա հովանավորությունը:

Ա. 3. ТАДЕВОСЯН—Выражение армянских космогонических представлений в кузнечном обряде — Работа посвящена освещению символического смысла сакрального образа кузнеца и изготовленных им в Страстную Пятницу ритуальных колец. Кузнец в своей сакральной роли выступает как творец в борьбе против Вишана за стаявление Космоса. Удары его молота по наковалью символизируют борьбу против находящегося под Космическим деревом Вишана, а ковалое кольцо осмысливается как знак Солнца, последовательность света и мрака, начало времени, то есть миротворчества.

Семиотика обмена знаками мужского и женского плодородия кольцом и яйцом дополняет указанный ритуальный образ кузнеца новыми сакральными чертами человека-творца. Сказанное позволяет выявить в образе кузнеца характерные для трехфункциональности индоевропейского пантеона военную и миротворческую функции, которые, наряду с экономической, обобществляют его образ.